## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի <<Վանաձորի բոնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց>> ՊՈԱԿ-ում հիմնանորոգման (հատակի բարձրացում և հիմնանորոգում, սանհանգույցի հիմնանորոգում) աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/20 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/20 պայմանագրում 2017 թվականի նոյեմբերի 28-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ N 1 | Անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը |
| Փոփոխության նկարագրություն | ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/20 ծածկագրով պայմանագրի 8.5 կետի համաձայն կնքվել է լրացուցիչ համաձայնագիր (պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով) |
| Փոփոխության հիմնավորում | ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետ: |
| Փոփոխության առաջացման պատճառ N 2 | Լրացուցիչ կանխավճարի տրամադրում՝ շինարարության իրականացման համար անհրաժեշտ սարքերը, սարքավորումները և նյութերը ձեռք բերելու նպատակով |
| Փոփոխության նկարագրություն | Պայմանագրով նախատեսված կանխավճարի գումարը 4 080 000 (չորս միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամի փոխարեն սահմանվել է 15 846 303 (տասնհինգ միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար երեք հարյուր երեք) ՀՀ դրամ |
| Փոփոխության հիմնավորում | <<Բազալտշին>> ԱԿ-ի կողմից 2017 թվականի նոյեմբերի 27-ին ներկայացված կանխավճարի բանկային երաշխիքը: |

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

/19.10.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/20 պայմանագրի/

ք. Երևան <<28>> նոյեմբերի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և <<Բազալտշին>> ԱԿ-ն (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս Ընկերության տնօրեն Լ.Մարտիրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 19.10.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/20 ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.1.1 և 8.5 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Պայմանագրի 1.3 կետում՝ <<30.11.2017>> բառերը փոխարինել <<29.12.2017>> բառերով:

1.1.2 Պայմանագրի հավելված թիվ 2-ը փոխարինել սույն համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված թիվ 1-ով:

1.1.3 Պայմանագրի 5.1.1 կետի <<4 080 000 (չորս միլիոն ութսուն հազար)>> թիվը և բառերը փոխարինել <<15 846 303 (տասնհինգ միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար երեք հարյուր երեք)>> թվով և բառերով:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը՝ կազմված 1 էջից, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011012730<br>ՀՎՀՀ 02565827 | <<Բազալտշին>> ԱԿ<br>ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գեղարքունիք<br><<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ<br>Հ/Հ 1150000278680100<br>ՀՎՀՀ 08400345 |
| Աշխատակազմի ղեկավար՝ | Տնօրեն՝ |
| ______ Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ______ Լ.Մարտիրոսյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

«ԲԱԶԱԼՏՇԻՆ» «БАЗАЛЬТШИН» «BAZALTSHIN» 08400345

*Հավելված թիվ 1*
*19.10.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/20 պայմանագրի*
*28.11.2017թ. կնքված թիվ 1 համաձայնագրի*

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ <<ՎԱՆԱՁՈՐԻ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ (ՀԱՏԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումները | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Հողային աշխատանքներ և հիմքեր | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 05.11.2017 |
| 2 | Շրջանակների և պատերի կառուցում | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 10.11.2017 |
| 3 | Ծածկերի կառուցում | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 15.11.2017 |
| 4 | Տանիքի կառուցում | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 20.12.2017 |
| 5 | Միջնորմների կառուցում, դռների և պատուհանների տեղադրում, հարդարման աշխատանքներ, հատակներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 29.12.2017 |
| 6 | Շոգեբաղնիքի կառուցում | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 29.12.2017 |
| 7 | Ներքին ինժեներական ցանցեր | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 29.12.2017 |
| 8 | Արտաքին ինժեներական ցանցեր | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 29.12.2017 |
| 9 | Սալվածք | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 29.12.2017 |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012730
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

---------------------------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Պ Ա Լ Ա Ռ Ո Ւ**

<<Բազալտշին>> ԱԿ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գեղարքունիք
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000278680100
ՀՎՀՀ 08400345

Տնօրեն՝

---------------------------- Լ.Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.